Կ-531-10.03.2023-ՊԱ-011

2-րդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ-91-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում.

1) 1-րդ մասում «տույժերի» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ անձանց տրվող խրախուսանքի» բառերը.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ներքին գործերի նախարարությունների ու ազգային անվտանգության համակարգերում (այսուհետ՝ նաև զինված ուժեր և այլ զորքեր) զինվորական ծառայություն անցնող անձանց վրա:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասում «ծառայություն անցնելու» բառերը փոխարինել «ծառայության և զինծառայողի կարգավիճակի» բառերով:

Հոդված 3. Օրենքի 2-րդ գլխի վերնագրում «ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ» բառերը հանել:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում.

1) «ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԽՐԱԽՈՒՍԱՆՔՆԵՐԸ» բառերը փոխարինել «ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ» բառերով.

2) ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 14-րդ կետը.

3) 5-րդ մասում «2-14-րդ» բառերը փոխարինել «2-13-րդ» բառերով.

4) լրացնել 6-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կարող է «գերատեսչական մեդալով պարգևատրում» խրախուսանք կիրառվել նաև

համապատասխան ոլորտներում նշանակալի ծառայություններ մատուցած զինծառայող չհանդիսացող անձանց նկատմամբ: Զինծառայողները, ինչպես նաև սույն մասում նախատեսված այլ անձինք գերատեսչական մեդալով կարող են պարգևատրվել նաև հետմահու:»:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Զորահավաքային զորակոչի միջոցով զորահավաքային զինվորական ծառայություն անցնող կամ վարժական հավաքների կանչված շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-6-րդ և 10-12-րդ կետերով նախատեսված խրախուսանքները:»:

Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Զորահավաքային զորակոչի միջոցով զորահավաքային զինվորական ծառայություն անցնող կամ վարժական հավաքների կանչված ավագ ենթասպայական կազմի զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 10-13-րդ կետերով նախատեսված խրախուսանքները:»:

Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «10-14-րդ» բառերը փոխարինել «10-13-րդ» բառերով.

2) լրացնել 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Զորահավաքային զորակոչի միջոցով զորահավաքային զինվորական ծառայություն անցնող կամ վարժական հավաքների կանչված սպայական կազմի զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 10-13-րդ կետերով նախատեսված խրախուսանքները:»:

Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածում.

1) 1-ին մասում.

ա. առաջին նախադասությունում «ստորաբաժանման» բառից հետո լրացնել «, զորամասի» բառը,

բ. առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, ստորաբաժանման զինվորական անձնակազմի նկատմամբ կարող են կիրառվել սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-8-րդ, իսկ զորամասի զինվորական անձնակազմի նկատմամբ՝ 2-րդ և 8-րդ կետերով նախատեսված խրախուսանքները, ինչպես նաև զինվորական անձնակազմի (ստորաբաժանման, զորամասի) նկատմամբ խրախուսանքի տեսակի ընտրության և կիրառման ժամանակ հաշվի են առնվում առանձին զինծառայողի նկատմամբ խրախուսանքի կիրառման պայմանները՝ հաշվի առնելով սույն օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների պահանջները: Ստորաբաժանման զինվորական անձնակազմի նկատմամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ, իսկ զորամասի զինվորական անձնակազմի նկատմամբ՝ 8-րդ կետերով նախատեսված խրախուսանքները կիրառելիս հաշվի են առնվում նաև ստորաբաժանման կամ զորամասի բնականոն գործունեության ու խնդիրների կատարման անխոչընդոտ իրականացման անհրաժեշտությունը:».

2) 5-րդ մասում՝

ա. 7-րդ կետում «ծառայություն անցնելու» բառերը փոխարինել «ծառայության և զինծառայողի կարգավիճակի» բառերով, իսկ «քանակով» բառից հետո լրացնել «, ընդ որում, ստորաբաժանման զինվորական անձնակազմի նկատմամբ խրախուսանքը կիրառվում է մինչև վաշտ օղակը՝ պահպանելով արձակուրդների տրման ժամանակացույցով սահմանված համամասնությունները» բառերը.

բ. ուժը կորցրած ճանաչել 14-րդ կետը:

Հոդված 9. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքով սահմանված իրավախախտումների համար կիրառվում է կարգապահական պատասխանատվություն, եթե դրանցում առկա չեն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված արարքների հատկանիշներ:

3. Վարչական իրավախախտում թույլ տված զինծառայողը կարգապահական պատասխանատվության է ենթարկվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով, որի շրջանակներում ստացված՝ վարչական իրավախախտում կատարելու համար զինծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նյութերով սույն օրենքի 27-րդ հոդվածով սահմանված ծառայողական քննություն չի անցկացվում և

իրավասու հրամանատարի (պետի) հրամանով զինծառայողը կարգապահական տույժի է ենթարկվում սույն օրենքի 36-րդ հոդվածի համաձայն:»:

Հոդված 10. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կարգապահական պատասխանատվության ենթակա չէ այն զինծառայողը, որը թեև սույն օրենքի հատուկ մասով նախատեսված արարք է կատարել, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում: Սույն օրենքի շրջանակներում ծայրահեղ անհրաժեշտության վիճակը մեկնաբանվում և կիրառվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածում սահմանված իմաստով և կարգով:»:

Հոդված 11. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կարգապահական պատասխանատվության ենթակա չէ այն զինծառայողը, որը թեև սույն օրենքի հատուկ մասով նախատեսված արարք է կատարել, սակայն գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում: Սույն օրենքի շրջանակներում անհրաժեշտ պաշտպանության վիճակը մեկնաբանվում և կիրառվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածում սահմանված իմաստով և կարգով:»:

Հոդված 12. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասում «չեն նշված օրենսդրության մեջ» բառերը փոխարինել «նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին մասում» բառերով:

Հոդված 13. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) կարգապահական տույժի կրման ընթացքում նոր կարգապահական իրավախախտում կատարելը.»:

Հոդված 14. Օրենքի 20-րդ հոդվածում.

1) վերնագրում «խախտման» բառը փոխարինել «իրավախախտման» բառով.

2) 2-րդ մասում «գործով նախաքննության» բառերը փոխարինել «վարույթի» բառով, իսկ «նախաքննության մարմնի» բառերը փոխարինել «քրեական վարույթ իրականացնող մարմնի» բառերով:

Հոդված 15. Օրենքի 22-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասը:

Հոդված 16. Օրենքի 23-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ 5 տոկոսից մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով.».

2) 3-րդ մասում «4-րդ» բառը փոխարինել «5-րդ» բառով:

Հոդված 17. Օրենքի 24-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «4-րդ (միայն շարքային կազմին),» բառերը հանել.

2) 2-րդ մասում «(միայն շարքային կազմին)» բառերը հանել.

3) լրացնել 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Զորահավաքային զորակոչի միջոցով զորահավաքային զինվորական ծառայություն անցնող կամ վարժական հավաքների կանչված շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը:»:

Հոդված 18. Օրենքի 25-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «2-րդ,» բառից հետո լրացնել «4-րդ,» բառը.

2) լրացնել 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Զորահավաքային զորակոչի միջոցով զորահավաքային զինվորական ծառայություն անցնող կամ վարժական հավաքների կանչված ավագ ենթասպայական կազմի զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը:»:

Հոդված 19. Օրենքի 26-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «2-րդ,» բառից հետո լրացնել «4-րդ,» բառը.

2) լրացնել 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Զորահավաքային զորակոչի միջոցով զորահավաքային զինվորական ծառայություն անցնող կամ վարժական հավաքների կանչված սպայական կազմի զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը:»:

Հոդված 20. Օրենքի 27-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի երկրորդ նախադասությունում «կարգապահական իրավախախտման մասին հրամանատարին (պետին) հայտնի դառնալու» բառերը փոխարինել «սույն հոդվածով սահմանված կարգով կարգապահական իրավախախտումը հաստատող ծառայողական քննության եզրակացությունը կարգապահական տույժ տալու իրավասություն ունեցող հրամանատարի (պետի)

կողմից ստանալու» բառերով, իսկ «՝ չհաշված նշանակված ծառայողական քննության անցկացման կամ ծառայողական քննության կասեցման ժամանակահատվածները» բառերը հանել.

2) 4.1-ին մասի երրորդ նախադասությունում «վերսկսվում է քրեական վարույթով ուժի մեջ մտած վերջնական որոշումն ստանալու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «դադարեցվում է» բառերով.

3) 6-րդ մասի առաջին նախադասությունում «Տրված կարգապահական տույժերը, ինչպես նաև թույլ տրված» բառերը փոխարինել «Թույլ տրված» բառերով.

4) 7-րդ մասի առաջին նախադասությունում «կարող է» բառերից հետո լրացնել «սույն հոդվածի 2-րդ մասում նշված 30-օրյա ժամկետը լրանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ գրավոր» բառերը.

5) 8-րդ մասի երկրորդ նախադասությունում «ծանրությանը» բառից հետո լրացնել «՝ ուժը կորցրած ճանաչելով կրտսեր հրամանատարի (պետի) կողմից կիրառված կարգապահական տույժը՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ, 6-րդ և 11-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերի՝ դրանց կիրառումը փաստացի սկսված լինելու դեպքում, որոնց պարագայում թույլատրվում է ավելացնել տրված կարգապահական տույժի օրերի քանակը, եթե դրանք տրված չեն համապատասխան կարգապահական տույժի առավելագույն ժամկետով» բառերը.

6) ուժը կորցրած ճանաչել 9-րդ մասը:

Հոդված 21. Օրենքը լրացնել 27.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 27.1. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԸՆՏՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Զինծառայողին նույն կարգապահական իրավախախտման համար մեկից ավելի կարգապահական տույժ չի կարող տրվել: Սույն օրենքի 5-րդ գլխի որևէ հոդվածի որևէ մասով կարգապահական իրավախախտումը որակվելուց հետո, կիրառման ենթակա կարգապահական տույժ է ընտրվում համապատասխան մասի կետերով թվարկված կարգապահական տույժերից միայն մեկը:

2. Հրամանատարը (պետը)՝ կարգապահական տույժի տեսակը որոշելիս, հաշվի է առնում սույն օրենքի 24-րդ, 25-րդ կամ 26-րդ հոդվածները՝ որքանով որ ընտրված կարգապահական տույժի տեսակը թույլատրելի է կիրառել կարգապահական իրավախտում կատարած համապատասխան կազմի զինծառայողի նկատմամբ:

3. Մեկից ավելի կարգապահական իրավախախտման համար կարող է տրվել մեկ կարգապահական տույժ՝ յուրաքանչյուր արարքին առանձին իրավական գնահատական տալու հիման վրա: Այդ դեպքում չեն կարող ընտրվել յուրաքանչյուր արաքի համար սույն օրենքի 5-րդ գլխի՝ արարքը որակող հոդվածներով նախատեսված առավել մեղմ կարգապահական տույժերը:»:

Հոդված 22. Օրենքի 28-րդ հոդվածում.

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. «Զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում» կարգապահական տույժը կիրառվում է հրամանով և հայտարարվում է անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: «Զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում» կարգապահական տույժի ենթարկված զինծառայողը ոչ պակաս, քան մեկ շաբաթով զրկվում է զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակում ստանալու իրավունքից:».

2) լրացնել 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. «Ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում» կարգապահական տույժը կիրառվում է հրամանով և հայտարարվում է անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: «Ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում» կարգապահական տույժ կիրառելու հրամանի հիման վրա զինծառայողի ամսական դրամական ապահովությունը հաշվարկող իրավասու ստորաբաժանման կողմից զինծառայողին չի հաշվարկվում հրամանում նշված չափով և ժամկետով պաշտոնային դրույքաչափի մասը, ընդ որում, տույժի կիրառման հետևանքով զինծառայողին վճարվող ամսական պաշտոնային դրույքաչափը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափից:»:

Հոդված 23. Օրենքի 29-րդ հոդվածում.

1) ուժը կորցրած ճանաչել 2-րդ և 3-րդ մասերի 4-րդ կետերը.

2) 4-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ 5 տոկոսով՝ մեկ ամիս ժամկետով:».

3) 5-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 10 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.».

4) 6-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 15 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.».

5) 7-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 20 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.».

6) 8-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 25 տոկոսով՝ մինչև երեք ամիս ժամկետով.».

7) 9-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.».

8) 10-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.».

9) 11-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.»:

Հոդված 24. Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում» կարգապահական տույժով սահմանված ժամկետը լրանալուց հետո.»:

Հոդված 25. Օրենքի 5-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

ԳԼՈՒԽ 5

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

ՀՈԴՎԱԾ 31. ՀՐԱՄԱՆԸ ԿԱՄ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼԸ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵԼԸ

1. Հրամանատարի (պետի)՝ օրինական և սահմանված կարգով տրված հրամանը կամ կարգադրությունը ստորադասի (ենթակայի) կողմից դիտավորությամբ չկատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև քսան օր ժամկետով.

3) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև քսան օր ժամկետով.

4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 20 տոկոսով՝ մինչև երեք ամիս ժամկետով.

5) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

6) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև վեց ամիս ժամկետով.

7) զինվորական ծառայությունից արձակում:

2. Հրամանատարի (պետի) հրամանը կամ կարգադրությունը ստորադասի (ենթակայի) կողմից ոչ պատշաճ կատարելը կամ ժամանակին չկատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև տասնհինգ օր ժամկետով.

4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 20 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.

5) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) կարգապահական վաշտ ուղարկելը՝ քսան օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

2) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

3) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

4) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.

5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

6) զինվորական ծառայությունից արձակում:

ՀՈԴՎԱԾ 32. ԶՈՐԱՄԱՍԸ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԹՈՂՆԵԼԸ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ

1. Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ծառայության վայր ժամանակին չներկայանալը՝ երեք օրից ոչ ավելի

տևողությամբ, կամ երեք ամսվա ընթացքում ոչ ավել քան երեք անգամ մինչև մեկ ժամ տևողությամբ, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով.

4) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև քսան օր ժամկետով.

5) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 10 տոկոսով՝ մինչև երեք ամիս ժամկետով.

6) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ երեք ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են մի խումբ անձանց կողմից, կամ երեք ամսվա ընթացքում մեկ ժամից ավել, սակայն երեք օրից պակաս ընդհանուր տևողությամբ երկրորդ անգամ, կամ մինչև մեկ ժամ տևողությամբ՝ երեք և ավելի անգամ, առաջացնում են կարգապահական պատասխանատվություն՝

1) կարգապահական վաշտ ուղարկելը՝ քսան օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

2) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 20 տոկոսով՝ մինչև երեք ամիս ժամկետով.

3) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

4) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.

5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

6) զինվորական ծառայությունից արձակում:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, առաջացնում են կարգապահական պատասխանատվություն՝

1) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մեկ ամիս ժամկետով.

2) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

3) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

4) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.

5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

6) զինվորական ծառայությունից արձակում:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներն առաջին անգամ կատարած զինծառայողն ազատվում է կարգապահական պատասխանատվությունից, եթե դրանք կատարել է ծանր հանգամանքների զուգորդմամբ:

ՀՈԴՎԱԾ 33. ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

1. Մարտական հերթապահության կրման կամ մարտական ծառայության կրման կանոնները դիտավորությամբ խախտելն առաջացնում է կարգապահական պատաս-խանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մեկ ամիս ժամկետով.

3) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 20 տոկոսով՝ մինչև երեք ամիս ժամկետով.

4) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

5) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ երեքից վեց ամիս ժամկետով.

6) զինվորական ծառայությունից արձակում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով կատարելը առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև տաս օր ժամկետով.

4) գերատեսչական կրծքանշանից զրկում.

5) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 10 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.

6) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) կարգապահական վաշտ ուղարկելը՝ քսան օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

3) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

4) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

5) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.

6) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

7) զինվորական ծառայությունից արձակում:

ՀՈԴՎԱԾ 34. ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

1, Սահմանապահ ծառայություն կրելու կանոնները դիտավորությամբ խախտելը սահմանապահ վերակարգի մեջ գտնվող կամ սահմանապահ ծառայության այլ պարտականություններ կատարող զինծառայողի կողմից առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) կարգապահական վաշտ ուղարկելը՝ հինգ օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

3) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ 20 տոկոսով՝ մինչև երեք ամիս ժամկետով.

4) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

5) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ երեքից վեց ամիս ամիս ժամկետով.

6) զինվորական ծառայությունից արձակում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով կատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) գերատեսչական կրծքանշանից զրկում.

4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 10 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.

5) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

6) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև չորս ամիս ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) կարգապահական վաշտ ուղարկելը՝ քսան օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

3) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

4) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.

5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

6) զինվորական ծառայությունից արձակում:

ՀՈԴՎԱԾ 35. ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ ՈՒ ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

1. Կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքային կանոնները դիտավորությամբ խախտելն պարեկախմբի կազմի մեջ մտնող կամ պահակախմբի կազմի մեջ մտնող անձի կողմից առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) կարգապահական վաշտ ուղարկելը՝ հինգ օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

3) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 20 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.

4) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

5) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև վեց ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով կատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) գերատեսչական կրծքանշանից զրկում.

4) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև տաս օր ժամկետով.

5) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 10 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.

6) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև վեց ամիս ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) կարգապահական վաշտ ուղարկելը՝ քսան օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

3) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

4) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

5) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.

6) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

7) զինվորական ծառայությունից արձակում:

ՀՈԴՎԱԾ 36. ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

1. Զինծառայողի կողմից ներքին ծառայության կանոնագրքային կանոնները դիտավորությամբ խախտելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) կարգապահական վաշտ ուղարկելը՝ հինգ օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

3) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 20 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.

4) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

5) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև վեց ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով կատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) գերատեսչական կրծքանշանից զրկում.

4) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև տաս օր ժամկետով.

5) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 10 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.

6) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև վեց ամիս ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) կարգապահական վաշտ ուղարկելը՝ քսան օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

3) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

4) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

5) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.

6) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

7) զինվորական ծառայությունից արձակում:

ՀՈԴՎԱԾ 37. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

1. Հասարակական կարգը պահպանելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը հասարակական անվտանգության ապահովման և հասարակական կարգի պահպանման վերակարգի մեջ գտնվող անձի կողմից առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև մեկ ամիս ժամկետով.

4) գերատեսչական կրծքանշանից զրկում.

5) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 10 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.

6) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

7) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով:

ՀՈԴՎԱԾ 38. ԶԵՆՔԸ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԸ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՒՅՔԸ, ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ

ՆՅՈՒԹԵՐԸ, ՍԱՐՔԵՐԸ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԱՆԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ ՈՉՆՉԱՑՆԵԼԸ ԿԱՄ ՎՆԱՍԵԼԸ

1. Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն ինքնավստահությամբ կամ անփութությամբ ոչնչացնելը կամ վնասելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ քսան օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

4) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև մեկ ամիս ժամկետով.

5) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 20 տոկոսով՝ մինչև երկու ամիս ժամկետով.

6) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

7) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով:

ՀՈԴՎԱԾ 39. ԶԵՆՔԻ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ, ՍԱՐՔԵՐԻ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

1. Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև մեկ ամիս ժամկետով.

4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 20 տոկոսով՝ մինչև երեք ամիս ժամկետով.

5) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

6) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև վեց ամիս ժամկետով.

7) զինվորական ծառայությունից արձակում:

ՀՈԴՎԱԾ 40. ԶԵՆՔԸ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԸ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՒՅՔԸ, ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ, ՍԱՐՔԵՐԸ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ՄԵԿ ՈՒՐԻՇԻՆ ՀԱՆՁՆԵԼԸ

1. Զինծառայողին վստահված զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը, սարքերը կամ առարկաներն սահմանված կարգի խախտմամբ մեկ ուրիշին հանձնելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասհինգ օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

5) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

6) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.

7) զինվորական ծառայությունից արձակում:

ՀՈԴՎԱԾ 41. ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԵԼԸ

1. Զինծառայողի կողմից օրենքով սահմանված սահմանափակումները դիտավորությամբ չպահպանելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մեկ շաբաթից միչև մեկ ամիս ժամկետով.

3) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև մեկ ամիս ժամկետով.

4) գերատեսչական կրծքանշանից զրկում.

5) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

6) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև վեց ամիս ժամկետով.

7) զինվորական ծառայությունից արձակում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով կատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մեկ շաբաթից մինչև տասնհինգ օր ժամկետով.

4) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև 20 օր ժամկետով.

5) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 20 տոկոսով՝ մեկ ամիս ժամկետով.

6) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին:

ՀՈԴՎԱԾ 42. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

1. Գաղտնիության ռեժիմի պահպանման կանոնները խախտելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև քսան օր ժամկետով.

4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երկու ամիս ժամկետով.

5) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև վեց ամիս ժամկետով.

6) զինվորական ծառայությունից արձակում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է գաղտնիության ռեժիմի պահպանման համար պատասխանատու ստորաբաժանումների զինծառայողների կողմից, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) կարգապահական վաշտ ուղարկելը՝ քսան օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

3) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

4) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

5) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.

6) զինվորական ծառայությունից արձակում:

ՀՈԴՎԱԾ 43. ՄԵՔԵՆԱՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

1. Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու, շահագործելու կամ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև մեկ ամիս ժամկետով.

4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

5) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

6) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև վեց ամիս ժամկետով.

7) զինվորական ծառայությունից արձակում:

ՀՈԴՎԱԾ 44. ԹՌԻՉՔՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

1. Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման այլ կանոնները խախտելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև մեկ ամիս ժամկետով.

4) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

5) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

6) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

7) զինվորական ծառայությունից արձակում:

ՀՈԴՎԱԾ 45. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ (ՊԵՏԻ) ԿՈՂՄԻՑ ՁԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՀԱՎԱՍԱՐ ՄՈՏԵՑՈՒՄ ՑՈՒՑԱԲԵՐԵԼԸ

1. Հրամանատարի (պետի) կողմից զինծառայողի նկատմամբ դիտավորությամբ անհավասար մոտեցում ցուցաբերելը՝ վերջինիս նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական
պատասխանատվության ենթարկելու լիազորություններն իրականացնելիս, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

1) խիստ նկատողություն.

2) ամսական պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ մինչև 30 տոկոսը ներառյալ՝ մինչև երեք ամիս ժամկետով.

3) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.

4) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մինչև վեց ամիս ժամկետով.

5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

6) զինվորական ծառայությունից արձակում:»:

Հոդված 26. Օրենքի 6-րդ գլխի վերնագրում «Զինծառայողի կողմից զեկուցագիր ներկայացնելու կարգը» բառերը փոխարինել «Կարգապահական տույժի բողոքարկման կարգը և ժամկետները» բառերով:

Հոդված 27. Օրենքի 47-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 47. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը զինծառայողը կամ կարգապահական տույժի կիրառման արդյունքում զինվորական ծառայությունից արձակված անձը կարող է բողոքարկել տույժը կիրառած հրամանատարի (պետի) վերադաս հրամանատարին (պետին)՝ տույժի մասին իրեն գրավոր ծանուցելուց կամ այլ ձևով իրեն հայտնի դառնալուց հետո մեկամսյա ժամկետում՝ ներկայացնելով այդ մասին զեկուցագիր (բողոք), ինչպես նաև դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում:

2. Կարգապահական տույժ կիրառելու մասին հրամանի հիման վրա արձակված անհատական իրավական ակտը (հրամանը) չի կարող բողոքարկվել, եթե չի բողոքարկվել կարգապահական տույժ կիրառելու մասին իրավասու հրամանատարի (պետի) հրամանը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները բաց թողնելու դեպքում կիրառված կարգապահական տույժը և դրա հիման վրա արձակված այլ իրավական ակտերը դառնում են անբողոքարկելի:

4. Ներկայացված զեկուցագիրը (բողոքը) վերադաս հրամանատարը (պետը) քննարկում է և դրա վերաբերյալ որոշում է կայացնում զեկուցագիրը (բողոքը) ստանալուց հետո 15-օրյա ժամկետում:

5. Քննարկելով կիրառված կարգապահական տույժի վերաբերյալ զեկուցագիրը (բողոքը)՝ վերադաս հրամանատարը (պետը) կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) զեկուցագիրը (բողոքը) լրիվ կամ մասնակի բավարարելու մասին, կամ

2) զեկուցագիրը (բողոքը) մերժելու մասին:

6. Ներկայացված զեկուցագրի (բողոքի) քննարկման արդյունքում կայացված որոշման պատճենը 3-օրյա ժամկետում ուղարկում է զեկուցագիրը (բողոքը) ներկայացրած անձին:»:

Հոդված 28. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՎՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ԱԺ պատգամավոր Ա. Խաչատրյան	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդված	Լրացում կատարել նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, որում «պատճառով» բառից հետո լրացնել «զինվորական ծառայության համար ժամանակա-վորապես ոչ պիտանի կամ» բառերը, քանի որ նախագծի 12-րդ հոդվածով նույնաբովանդակ	Ընդունվել է, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	Առաջարկն ընդունվել է

			լրացում է կատարվում օրենքի 29-րդ հոդվածում՝ պարտադիր զինծառայողների մասով:	մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 1-ին կետը լրացվել նոր «ա» ենթակետով, որում իրացվել է ներկայացված առաջարկությունը:	
2.	ԱԺ պատգամավոր Ա. Խաչատրյան	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 29-րդ հոդված	Փոփոխություններ կատարել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասում, որի երրորդ նախադասությունում «այլ բնակելի տարածություն վարձակա-լելու դիմաց պայմանագրային զինծառայողներին վճարվում է դրամական փոխհատուցում» բառերը փոխարինել «պայմանագրային զինծառայողներին վճարվում է ամսական դրամական հատուցում» բառերով, իսկ չորրորդ նախադասու-թյունում «բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում» բառերը փոխարինել «ամսական դրամական հատուցում» բառերով:	Ընդունվել է, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 29-րդ հոդվածը լրացվել նոր 1-ին կետով, որում իրացվել են ներկայացված առաջարկությունները	Առաջարկն ընդունվել է
3.	ՀՀ կառավարության նախաձեռնություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում	Լրացում կատարել նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում, որում «կետերով»	Ընդունվել է, «Զինվորական ծառայության և զինծառայողի	

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետ	բառից հետո լրացնել «կամ 1.1-ին մասով» բառերը, քանի որ 54-րդ հոդվածը չի կարգավորում օրենքի 41-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն կադրերի տակ թողնված զինծառայողների արձակման հարցը:	կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետում իրացվել է առաջարկությունը:	
4.	ՀՀ կառավարության նախաձեռնություն	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 4-րդ կետ	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 4-րդ կետով օրենքի 59-րդ հոդվածի 9-րդ մասում լրացվող նոր նախադասությունը փոփոխել, քանի որ վարժական հավաքներին միևնույն գործատուի (մարմնի, կազմակերպության) աշխատողների ընդհանուր թվի ոչ ավելի, քան 5 տոկոսի չափով աշխատողներ ներգրավելու պահանջի արդյունքում փաստացի մինչև 10-ը ներառյալ աշխատող ունեցող գործատուից վարժական հավաքներին թեկուզև մեկ աշխատող ներգրավելու հնարավորությունը բացակայում է: Այդ նպատակով առաջարկվում է նախադասությունը շարադրել	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 4-րդ կետում իրացվել է առաջարկությունը:	

			հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում, խաղաղ ժամանակ հայտարարված վարժական հավաքներին կարող են կանչվել մինչև 15-ը ներառյալ աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ առավելագույնը մեկ աշխատող, 16-ից մինչև 30-ը ներառյալ աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ առավելագույնը երկու աշխատող, իսկ 30-ից ավելի աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ աշխատողների ընդհանուր թվի ոչ ավելի, քան 5 տոկոսի չափով աշխատողներ:»:		